ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«25» մայիսի 2020թ. թիվ 142 նիստում

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ (ԳԱՑ) ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ Կենտրոն) առաքելության և զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների իրականացումը ենթադրում է որդեգրել բարեփոխումների առավել նպատակասլացությունը և արդյունավետությունը ապահովող ռազմավարական մոտեցումներ, ունենալ դրանց գնահատման առանցքային ցուցիչներ (ԳԱՑ): Բոլոր նպատակները սահմանվել են Կենտրոնի ընդհանուր առաքելության և տեսլականի համատեքստում, յուրաքանչյուր նպատակին հասնելու համար սահմանվել են մի շարք խնդիրներ: Արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ չափանիշներով և ինչ սանդղակով պետք է «չափել» ռազմավարական ծրագրի այս կամ այն բաղադրիչի իրականացման ընթացքը: Դրանք հենց ԳԱՑ-երն

են, որոնք քննարկվում են բոլոր շահակիցների հետ և լրամշակվում: Այդ չափանիշների համաձայն կազմվում են Կենտրոնի և նրա յուրաքանչյուր ստորաբաժանման տարեկան հաշվետվությունները, որոնք էլ արտացոլում են համապատասխանությունը ակնկալվող և փաստացի արդյունքների միջև: Ընդ որում, հասկանալի է, որ Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագիրը ժամանակ առ ժամանակ կարող է փոփոխությունների ենթարկվել: Մեր կարծիքով ԳԱՑ-երը առավելագույնս պետք է համապատասխանեցվեն Կենտրոնի ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին, միաժամանակ, լինեն հրարավորինս ունիվերսալ:

Սույն փաստաթղթով սահմանվում են ԳԱՑ-երը, տեղեկատվության հավաքման աղբյուրները, մոտավոր ժամանակացույցն ըստ տարիների:

- Ընդունելության մասնագիտությունների/մասնագիտացումների լրամշակված ցանկի առկայություն ընդունելությունից առնվազն վեց ամիս առաջ:

- Ընդունելության գործընթացների գովազդի ընդլայնում, գովազդի համար տարբեր միջոցների կիրառում, այդ թվում՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ՝ տարեկան ոչ պակաս քան մեկ անգամ, - մամուլով՝ տարեկան ոչ պակաս քան մեկ անգամ, ինտերնետային կայքով՝ մշտական, պարբերաբար թարմացմամբ, հանդիպումների կազմակերպում գործատուների (այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների) և բակալավրիական կրթություն իրականացնող բուհերի հետ՝ տարեկան ոչ պակաս քան երկու անգամ:

- Դիմորդի ուղեցույց՝ առաջարկվող ծառայությունների նկարագրությամբ, բազմազան նյութերով, որը թարմացվում է երկու տարին մեկ անգամ:

- «Բաց դռների օրեր» և ապագա դիմորդների ճանաչողական այցեր՝ յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ, սկսած 2019թ.:

- Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման մասին դիմորդներին ու սովորողներին խորհրդատվության տրամադրում:

- Լրացուցիչ և շարունակական կրթության կառավարումն ապահովող հնարավորությունների առկայություն:

- Կենտրոնի որակի գնահատման և ապահովման համակարգի ձևավորման հայեցակարգ և կազմակերպական սխեմա՝ կառուցվածքային միավորների, կառավարման կառույցների գործառույթների հստակ տարանջատմամբ և համապատասխան ընթացակարգերի սահմանմամբ:

- Կենտրոնում ուսուցման որակի գնահատման և ապահովման գործող ներքին համակարգ՝ համահունչ եվրոպական արժևորման չափանիշների պահանջներին:

- Ուսուցման գնահատման արդյունքների պարբերաբար հրապարակում, սկսած հաջորդ ուսումնական տարվանից՝ 2019թ.:

- Մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացման տարեկան մշտադիտարկման գործառույթի ներդնում և կիրառում:

- Մագիստրոսական թեզերի տեղեկատվական բազայի ստեղծում՝ 2020թ. սկսած:

- Փուլային անցում կրթական ծրագրերի ձևավորմանը՝ կարողունակությունների (կոմպետենցիաների) ձևավորմանն ուղղված, եվրոպական կառուցվածքի:

- Կենտրոնի շրջանավարտներից գործատուների բավարարվածության պարբերական ուսումնասիրությունների իրականացում՝ առնվազն երկու տարին մեկ անգամ:

- Կենտրոնում կրեդիտային համակարգի վերանայում և մեթոդական ու կազմակերպական ապահովում:

- Սովորողների՝ դասընթացներին մասնակցության և ուսումնական առաջադիմության տվյալների կառավարման էլեկտրոնային համակարգի ներդնում և գործարկում:

- Կենտրոնի դասախոսական կազմի մանկավարժական գործունեության ամենամյա գնահատման համակարգի ներդնում և գործարկում:

- Ուսումնառությունից սովորողների բավարարվածության ամենամյա հարցման համակարգի ներդնում, տվյալների մասնագիտական վերլուծություն:

- Կենտրոնի գործունեության ինքնավերլուծություն՝ ըստ ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշների, 2019-2020թթ:

- Հանրային ծառայողների և մասնավոր հատվածի վերապատրաստումների կարիքի բացահայտման ծրագրի առկայություն:

- Լրացուցիչ կրթության արդյունավետության և որակի գնահատման մեթոդաբանության առկայություն, մեթոդաբանության մշակում, շարունակական գնահատում:

- Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգի առկայություն:

- Գիտական աստիճաններ ունեցող հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի տեսակարար կշիռը (անընդհատ աճի ապահովում):

- Պրոֆեսորադասախոսական տարակարգերի համար աշխատավարձերի տարբերակված սանդղակ՝ 2019-ից սկսած:

- Կադրերի հոսունության տոկոսը տարվա ընթացքում՝ համեմատական, յուրաքանչյուր տարվա համար:

- Կառավարման իրավական փաստաթղթային բազայի ամբողջականացում 2018-2019թթ:

- Տարեկան հաշվետվության նոր ձևաթերթ՝ Կենտրոնի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հիման վրա:

- Միասնական էթիկական չափանիշների (վարվելակերպի կանոնագիրք) առկայություն:

- Նյութատեխնիկական բազայի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին, այդ թվում՝ մեկ սովորողի համար լսարանային մակերեսը՝ 2,5 ք.մ., մեկ սովորողի համար օտար լեզուների կաբինետի մակերեսը՝ 3,0 ք.մ.:

- Մշակութային միջոցառումների ամենամյա ծրագրի առկայություն:

- Սոցիալական հիմնախնդիրներին միտված ամենամյա միջոցառումների ծրագրի առկայություն:

- Աշխատողների և սովորողների բավարարվածության գնահատում Կենտրոնում իրականացվող սոցիալական, մշակութային և այլ տիպի ծրագրերից, բավարարվածության գնահատման նպատակով ամենամյա ուսումնասիրություն սովորողների և աշխատողների շրջանում, ուսումնասիրությունների հրատարակում կայքէջում:

- Արտաբյուջետային մուտքերի աճի տոկոսը՝ նախորդ տարվա հետ համեմատ:

- Կենտրոնի աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճի տեմպերը:

- Տեղեկատվական ռեսուրսների զարգացման ուղղությունների վերաբերյալ ծրագրի առկայություն, Կենտրոնի բարելավված էլեկտրոնային կայք:

- Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:

- Գործող էլեկտրոնային գրադարան, ԳԱԱ ՖԳԳ հետ սերտ գործակցություն:

- Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում դասախոսների կողմից, moodle հարթակի ներդրում և զարգացում:

- Կենտրոնի հետազոտական նախագծերին մասնակցությունը, այդ թվում՝ գիտամանկավարժական համակազմ, ասպիրանտներ, մագիստրոսներ:

- Համագործակից կառույցների վերաբերյալ տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների բազա և տեղեկատվություն:

- Միջազգային գիտաժողովներ, գիտական պարբերական, համագործակցության ծրագրեր, գիտական թեմաներում ներգրավվածություն:

- Կենտրոնի PR ակտիվության (լրատվական-գովազդային միջոցառումներ) տարեկան անընդհատ աճ, ԶԼՄ անդրադարձերի թվի աճ:

- Կենտրոնի շրջանավարտների հետ արդյունավետ աշխատանք, միավորում, շրջանավարտների տվյալների տեղեկատվական և հաղորդակցության համակարգ:

- Կենտրոնի անդամակցությունը/մասնակցությունը միջազգային կազմակերպություններին և կոնսորցիումներին:

- Արտերկրում Կենտրոնի սովորողների կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպում:

- Միջազգային նախագծերի և այլ ծրագրերի շրջանակներում Կենտրոնի ներկայացուցիչների մասնակցությունը (գործուղումներ):

- ԳԱԱ համակարգի գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցության սերտացում, պայմանագրեր ու համաձայնագրեր, գործող ամբիոններ ինստիտուտներում:

Արդյունքների գնահատման ԳԱՑ-երի սույն համակարգը մշակվել է Կենտրոնի աշխատակիցներից, ուսանողներից ու շահակիցներից կազմված աշխատանքային խմբի կողմից:

Այն վերանայվում և թարմացվում է տարեկան պարբերականությամբ:

Դրա համար հիմք են ծառայում տեղեկատվության հավաքագրման տեղորոշված աղբյուրները, անընդհատ կատարելագործվող մեխանիզմները: Դրանց հիման վրա կատարվում է վերլուծություն, Կենտրոնի ստորաբաժանումներին տրվում են համապատասխան հանձնարարականներ, սահմանվում են վերջնաժամկետներ: ԳԱՑ-երի սույն համակարգը հաստատվում և դրանում փոփոխություններ են կատարվում Կենտրոնի տնօրենի հրամանով: Ըստ անհրաժեշտության ԳԱՑ-երի համակարգը, վերլուծության արդյունքները և սույն ընթացակարգը ներկայացվում են Կենտրոնի գիտական խորհրդին՝ քննարկման: